№ 116 ԿԻՐԱԿԻ ՕՈՒՆԻՍԻ 1 — 1903 — ԿԻՐԱԿԻ ՕՈՒՆԻՍԻ 1 № 116

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրատանշիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սերբիական դէպքերի առիթով. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. —Հայ կեանքէն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Երբեմն փոքրիկ իրերը ինչ մեծ պատմութիւններ են պարունակում իրանց մէջ։

Պտուկ է, բայց չսիկ է։ Սա ճիշդ է ասված։ Մի այդպիսի փոքրիկ իր այս րոպէին դրված է իմ առջև, և ես նրա մէջ կարդում եմ մի ամբողջ աղէտ։

Դա կարմիր կազմով մի նիհար ու բարակ տետրակ է, որ ուղարկված է մեր խմբագրութեան Շուշու գաւառի մի կողմից։ Կարդացի այդ տետրակը մեծ հետաքրքրութեամբ, համարեա յափշտակված, ապշած։ Կարդալը մի վայրկեանի բան է։ Տետրակի մէջ միայն երկու հատ երեսների վրա է երևում գրութիւն։ Եւ այդ գրութիւնը ոչ վէպ է, ոչ բանաստեղծութիւն։ Նա ոճ չունի, նկարագրութիւններ չը կան նրա մէջ։ Ո՛չ։ Շտապ ձեռքով շարված են մի քանի թուանշաններ և մի քանի բառեր էլ դրված են՝ այդ թուանշաններին միտք հաղորդելու համար։

Այո, այդքանը միայն։ Բայց այդ 10—12 տողերը ինչեր են պատմում։ Ոչ մի վէպ գուցէ չը կարողանայ այնքան լակոնական ձևով թղթի վրա դրոշմել մի այնպիսի աղէտ, որ այդ տողերից է երևում իր ամբողջ մերկութեամբ։ Մի աղէտ է դա, ոչ թէ մի մասնաւոր մարդու կեանքի աղէտը, այլ շատերի, հարիւրաւորների աղէտը։ Եւ ահա ինչ է ասում այդ փոքրիկ ու նիհար տետրակը։

Շուշու գաւառի այն մասը, որտեղից ուղարկված է նա, կոչվում է Խաչէն։ Թոյլ տուէք նախ և առաջ ներկայացնել ձեզ այդ երկիրը։ Ես նրան ճանաչում եմ, տեսել եմ մի քանի անգամ։ Ի՞նչպէս է կարմիր տետրակը մտել այնտեղ, ինչո՞ւ է նա այնքան աղէտ պարունակում իր մէջ։ Այդ դուք կիմանաք, ճանաչելով Խաչէնը։

Դա մի լեռնոտ, աղքատ երկիր է։ Երբ դուք, անցնելով նրա քարքարոտ, նեղ ու ոլորուն ճանապարհներով, նայում էք ձեր չուրջը, զգում էք մի ծանր, ճնշող ամայութիւն։ Անտառներ և անտառներ ամէն կողմ։ Ամէն տեղ բռնացած է ծառը։ Գիւղերը բարձրացել են սարերի լանջերը, կպել են քարափներին, նրանք փոքր ու խեղճ են, զարմանալի աղքատ, զարմանալի տկլոր։ Անհիւրասէր է բնութիւնը։ Հող չը կայ մշակելու համար։ Անտառների մէջ, լեռների ցցված լանջերին դուք տեսնում էք փոքրիկ ու վատ արտեր, որոնք գիւղացու միակ կերակրողներն են։ Արդեօք խաչէնցին որ և է բան տանում է ծախելու։ Մարդ չէ հաւատում, որ նա ծախելու բան ունենայ։ Եւ այդպէս նրան թելադրում է այն ընդհանուր աղքատութիւնը, որ տիրում է հայկական սարերի, մութ անտառների այդ անհրապոյր, վայրենի աշխարհում։

Եւ ինչ պատմութիւններ էք լսում։ Միշտ կէս-քաղցած են գիւղացիները, հազիւ կարողանում են հասնել մինչև միւս ամառ։ Բոլոր տների մէջ չէք ճարի անկողիններ. քնում են փաթաթվելով ինչի մէջ կարողանում են։ Գիւղերում երեխաները կիսամերկ են, իսկ մեծերը փաթաթված են այնպիսի ցնցոտիների մէջ, որոնք ուղղակի զարհուրանք են պատճառում։

Մի դժբախտ, մաշված, մութ ժողովուրդ, որ ապրում է անհիւրընկալ, վայրենի բնութեան մէջ։ Մի քանի կտոր վատ հողեր ունի նա,— և այլ ևս ոչինչ...

Այդ մերկութեան և անճարութեան մէջ երեւան է եկել կապիտալը բարերարի դերում։ Նա բացել է մետաքսի գործարաններ, գործ է առաջարկում և փող է վճարում։ Այդ բոլորը արձանացած է այն կարմիր տետրակների մէջ, որոնցից մէկը այժմ ինձ մօտ է։

Գործում են գլխաւորապէս կանայք, աղջկերք, երեխաներ։ Կապիտալը էժան ձեռքեր է որոնում, իսկ էժան ձեռքեր ուր որոնել, եթէ ոչ Խաչէնի պէս մերկ երկրում և այն դասակարգի մէջ, որ աշխատելու, հաց վաստակելու ոչ մի հնարաւորութիւն չունի։

Գիւղի մօտ բուսնում է մի մեծ շինութիւն։ Գիւղը ամբողջապէս ցնցոտիներ է, գետնափոր խրճիթներ է կամ շատ-շատ մի յարկանի փոքրիկ տնակներ։ Նոյն իսկ եկեղեցին էլ խեղճ ու ողորմելի է, կիսաքանդ, մերկ ու փոքր։ Մետաքսէ գործարանի շինութիւնը համարեա մի փառահեղութիւն է այդ շինական անճարութեան մէջ։ Նա փայլում է իր ապիտակ բարձր պատերով, իր գունաւոր կտուրով, խօսում է շոգիի լեզուով, սուլում է, աղմկում է, գործում է։ Գիւղի համար դրանից բարձր ու մեծ տեղ չը կայ։ Այդտեղ է հարստութիւնը, այդտեղ են հացի փող տալիս, այդտեղ են քաղաքի մարդիկ նայում, կարդադրում։

Եւ գիւղը այդ մեծ շինութեան դերին է դառնում, և մեծ շինութիւնը իր ամբողջ ուռանդով, իր բոլոր հուժկու կարողութեամբ ընկնում է գիւղի վրա, ծծում է նրան։

Ծծում է տարին տասներկու ամիս։ Նրան հարկաւոր են գիւղի թարմ, երիտասարդ հիւթերը։ Եւ աղքատ, մերկ երկիրը դէպի այդ շինութիւնն է քշում այն բոլոր ձեռքերը, որոնք կարող են աշխատել ժիր ու արագ, աշխատել երկար։ Մերկութիւնը ինքը պայմաններ չունի։ Նա միայն մի բան գիտէ, այն, որ կապիտալը բարերար է, քանի որ գործ ու հաց է տալիս։ Նա մտնում է այդ բարերարի դռնով, յանձնում է իրան նրա կամքին։ Պայմանները բարերարն է դնում. և նա, ի հարկէ, իրան երբէք ու ոչ մի տեղ չէ մոռանում։

Ամէն ինչ թոյլատրելի է, ամէն ինչ ներում է գիւղը. միայն թէ մի կտոր հաց տանայ։

Շատ թանգ է նստում այդ կտոր հացը. գիւղը տուժում է բարոյապէս և ֆիզիկապէս։ Գործարանի հետ գիւղական ազէտ աշխարհի մէջ է մտնում բարքերի ապականութիւնը. գործարանի մթնոլորտը նախ և առաջ թունաւորում է ընտանեկան մաքրութիւնը, օրինականացնում է ամուսնական անհաւատարմութիւնը, խաբված զոհեր, փչրված բախտ է առաջացնում։ Բանի քանի կեանքեր են մաշվում մեծ շինութեան մէջ, քանի քանի առողջ օրգանիզմներ են քայքայվում, դժբախտանում։ Այս բոլորի մասին ոչ գիր կայ, ոչ վկայութիւն։ Գիւղական աշխարհը շատ է հեռու ու կորած, շատ է անօգնական, կղզիացած իր վշտերի մէջ։ Եւ ո՞վ պիտի այնտեղ նայէ ու փաստեր հաւաքէ...

Բայց և այդպէս, այն, ինչ արձանագրվում է թղթի վրա, ինչ կատարվում է իբրև օրինական, կանոնաւոր յարաբերութիւն գործատիրոջ և գործաւորի մէջ, դարձեալ բաւական է, որ հարստահարութեան աղէտը պատկերացնէ մի սարսափելի պարզութեամբ։

Այսպէս է վկայում իմ ձեռքին գտնվող կարմիր տետրակը։

Նա ասում է, որ Խաչէնի գաւառամասում, աղքատութեան, մշտական կարիքի այդ լեռնաստանում, պէտք է աշխատել առաւօտեան ժամի 5-ից կամ 6-ից մինչև երեկոյեան ժամի 7-ը, որպէս զի կարելի լինի ստանալ եօթը կոպէկ։

Եօթը հատ կոպէկ։ Սա օրավարձ է։ Սա 12—13 ժամվայ վարձատրութիւնն է։ Վարձատրութիւն այն աշխատանքի համար, որ կատարում է գիւղացի աղջիկը մի ամբողջ օրվայ ընթացքում։ Աշխատանքի մի ժամը նոյն իսկ մի կոպէկ չարժէ։ Աշխատելով ամավայ մէջ քսան և չորս երկար ու ձիգ օրեր, այդպիսի աղջիկը ստանում է 1 ր. 68 կոպէկ։ Այն էլ ինչպէս է ստանում։ Կարմիր տետրակը ցոյց է տալիս, որ այդ «գումարը», մի ամավայ չարչարանքների այդ պտուղը տրվում է աշխատաւորին այն ժամանակ, երբ կամենում է գործարանը։ Եօթը կոպէկով մի աղջիկ բանել է յունվարից մինչև մայիս։ Ամբողջ այդ ժամանակ աղջիկը առձեռն փողով ստացել է միայն 70 կոպէկ։ Մնացած վարձը—2 ռուբլի 80 կոպէկ—գործարանը վճարել է ապրանքով։ Նա ունի սեփական խանութ, որ պատրաստ է բարերարութիւն անել գործաւորին, տալով նրան ճոթ և այլ իրեր։ Բարերարութիւնը, ի հարկէ, ձրի չէ. և այն, ինչ մի ձեռքով տալիս է գործարանը, միւս ձեռքով ձգտում է յետ ու յետ քաշել առատաձեռնութիւնը։ Կապիտալը շատ լաւ գիտէ գործել այնպիսի տեղերում, ուր չը կայ օրէնքի հսկողութիւն, ուր ժողովուրդը տգէտ է, աղքատութեան և անճարութեան մէջ ճնշված։ Նա գիտէ իր շահերը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՑ ԿԵԱՆՔԷՆ

Վենետիկ, մայիսի 26-ին

Պիպակի մը առթիւ—Ադամեանին „Հաշիւը"։—Բարեգործական գոյժ մը։—Դրօշակի մը գոյնը։

—

Գեղունիին նոր թիւը հրատարակուեցաւ. պարունակութեանը մեծագոյն մասը ռուսահայոց կեանքին նուիրուած, և՝ ռուսահայ բարբառին տիրապետութեամբը։ «Իրաց այս վիճակին մէջ»—ինչպէս երբեմն սովոր էին Գօլիս նեղ պարագայներու ատեն ըսել—գուցէ «իրաւասութեան սահմաններու խնդիր» ծագի եթէ թրքահպատակ հայ մը նկրտի իր լեզուովը և «պօլսական» ըմբռնումներովը կարծիք մը յայտնել այդ գեղարուեստական տեսակ մը Համայնագիտակին վրա։ Այս գրական «մերին—ձերին»-ի հարցը քննելու և խղճմտօրէն լուծելու դեռ ատեն կայ, վասն զի այդ փառաւոր հատորը թղթատելու հազիւ թէ ժամանակ ունեցայ։ Սակայն «Գեղունի»-ին առաջին էջերէն աչքիս զարկաւ պատկեր մը, «իրական կեանքէ» վիպակ մը զոր ամբողջապէս կարդացի։ Այդ պատկերին վրա—կամ՝ այդ պատկերին առթիւ—կրնամ անվտանգօրէն յիշատակութիւններ ընել։ «Համազգային» է և ոչ թէ զուտ տեղական։ Դէպքը եթէ Էջմիածնի շրջակայքերը կը պատահի, կրնար տեղի ունենալ նաև Գում-Գափու, ինչպէս Լօնդօն կամ Թեհրան։ Ցեղային տիպար մը զոր հազարին մէջէն կը զատենք թէ մերն է, նման հայկական այն դէմքերու, որոնք եթէ օտարազգիներու խառնամբոխի մը մէջ իսկ կորսուած ըլլան, կրնանք առանց դժուարութեան ճանչնալ։

Պարզ պատմութիւն մըն է։ Անգործ դրաչարին մէկը հայ ուսուցիչէ մը արծաթ ռուբլի մը ողորմութիւն կը ստանայ եկեղեցիին բակը։ Ու «բարեգործը» դիրուկ քաղքենիի մը—բուրժուայի մը—դրդմամբը կը կասկածի թէ «բարերարեալը» իր ընդունած դրամը կրնայ գինիի յատկացնել, փոխանակ հացի։ Պետրոսեանը Սահակին ետեւէն կը պորտի, ու գործաւորին տանը մէջ սրտաճմլիկ տեսարան մը կը պատահի։ Սահակ իր ընդունած ստակին հաշիւը ու միասին ալ ուելցուկը «բարեգործին» երեսը կը նետէ։ Այս պատմուածքը պ. Վ. Փափազեանինն է. գրուած է այն ոճովը, որ մեր գրականութեան արեւելեան բաժնին յատուկ է, անշուշտ ռուսական մատենագրութեան ազդեցութեամբը։ Հեղինակը իր ներկայացուցած անձնաւորութեանց ոչ շարժումներէն, ոչ մտածութիւններէն բան մը չի զոհեր։ Ինչքան շատ մանրամասնութիւն կարելի է մէկտեղ համախմբել կը համախմբէ, որպէս զի իրականութիւնը ընթերցողին աչքերուն մէջ խորամիսէ ու մտքին մինչև ստորմիքները իջեցնէ։ Արևմտեանները՝ ջղային ու անհամբեր՝ կը ջանան շուտ շուտ անցնիլ. և ոչ իսկ Ֆրանսացի Գուրժէ մը իրենց վրա կազդէ։ Մեր բնութիւնը ըմբոստ է երկարապատում հոգեբանութեան։

Ու չեմ գիտեր թէ կեանքի դռամները միշտ հոգեբանական շատ մանրազնին ուսումնասիրութեանց կարօտ են, որպէս զի հայ ընթերցողը ցնցեն, սարսեն։ Պ. Փափազեանին «Հաշիւը» միտքս ձգեց ուրիշ «Հաշիւ» մը զոր աւելորդ պիտի չը համարիմ յիշել։ Նախ՝ փաստ մը ևս տալու թէ խիստ հաշուապահանշ բարեգործներու տիպարները զուտ տեղական չեն, այսինքն՝ կովկասցի կամ պարսկաստանցի, այլ՝ ամէն տեղացի։ Յետոյ, արդարացնելու համար—գոնէ մինչև մէկ աստիճան—կարճ կապելու մեր վիպական գրականութիւնը։

—

Ադամեան հիւանդ էր. վերին Վոսփորի Պեոյիւքտերէ գեղը քաշուած, խեղճութեամբ կապրէր, սպասելով մահուան։ Տարին պիտի չ'կրնար բորբել։ Բարեկամներէն ոմանք փափաքեցան դժբաղդ արուեստագէտին քիչ մը հանգիստ անցընել տալ կեանքին մնացորդ օրերը։ Նուիրատուութեան մը պէտք տեսնուեցաւ։ Բայց այդ բարեկամները իրենք ալ կը տառապէին իրենց օրապահիկին համար։ Դիմեցին քանի մը վաճառականներու, որոնց շատ հեշտ էր Ադամեանը հանգիստ կենցաղավարութեամբ ապրեցնել, իրենք առանց նեղուելու։ Առաջին նուէր մը, հինգ ոսկի օսմանեան (մօտ 40 ռուբլի), վաճառականներուն վստահելի անձի մը ձեռքով կը յանձնուի Ադամեանին։ Քառասուն ռուբլի. բայց մեծակա գումար մըն էր ասիկայ. առանց հեգնաբանութեան։ Մէկանց ձեռքը հինգ ոսկի ունենալ բաղդաւորութիւն մըն էր անոր, որ կեանքի էն ընթացիկ հաճոյքներէն ալ զրկուած կը մնար։ Ադամեան ոչ գինի կը խնդրէր, ոչ օղի. քիչ մը զով օդ, ընութեան հրապոյրներուն վայելում իրեն կը բաւէին։ Իրիկնադէմին, նաւակի մը մէջ ընկողմանած, երազուն ու մրափուն, ժամու մը չափ կերթեկէր Սարբեարէն Պեոյիւքտերէ։ Քանի մը օր ետքը իր տունը կը ներկայանայ այն անձը, որ առաջին նուէրը բերած էր, ու կըսէ թէ «էֆէնդին, վաղը զինքը անպատճառ տեսնել կուզէ, իր մաղազան»։ Հիւանդը կը խնդրէ, որ եթէ իրեն ըսուելիքը շատ կարևոր բան մը չէ, զուր տեղը նեղութիւն չը կրէ մինչև Ստամբոլ իջնելու։ Պատասխան կը ստանայ, թէ «շատ շատ պէտքի բան պիտի ըսուի»։ Միւս օրը ճամբայ կելլէ. մէկուկէս ժամ շոգենաւէ յետոյ, հարկ է անցնիլ Եէնիճամիի խաժամուժէն, ու բարձրանալ մինչև Զագմագճըլար—Եօգուշին ծայրը, հազալով հազալով։

Մաղազան—այսինքն՝ վաճառատանը մէջ—էֆէնտին նստած է գրասեղանին առջև. այցելուն կընդունի, տեղէն քիչ մը շարժուելով ու «հրամմեցէք, միւսիւ—Ադամեան»-ով մը։ Առողջութեանը մասին քանի մը հարցումներ, օդին որպիսութեանը վրա քանի մը խօսք, և ահա ուրիշ երկու երեք վաճառական էֆէնդիներ ալ հետզհետէ կուգան։ Սպասաւոր մը զանոնք գացած կանչած էր։ Սուրճերը կը բերուին, և առեանը կը կազմուի—Միւսիւ Ադամեան, կը հարցնէ մէկը, զսպուած բարկութեան չեչտով մը, միւսիւ Ադամեան, իրիկունները խայբիսով պտըտելու կելլաս կոր եղեր։

—Ա՜հ, մի քիչ զովութիւն, կը մրմնջէ հիւանդը։

—Բայց իրիկուան այդ քեզի ինաս չի տար, կը հարցնէ ուրիշ մը։

—Այս օդին. ինչ ինաս, կելլայ Ադամեանից պատասխանը։

Վաճառականները իրարու երես կը նային։ Ադամեան իրենց նրբին հեգնաբանութենէն բան մը չի հասկնար կոր։ Մեղք որ դերասան ալ պիտի ըլլայ։ Ալ վերջին խօսքը առաջ բերելու է։

—Միւսիւ Ադամեան, կրսէ խոշորկէկներէն մէկը, մենք քեզի կանչեցինք դիտողութիւն մը ընելու համար։ Ամմա մի նեղանար, քու աղէկութեանդ համար է։ Քանի մը երիտասարդներ եկան մեզի ըսին, որ նեղութեան մէջ էք. մենք ալ մէջերնիս հանգանակութիւն

պաշտպանել խորամանկ, նուրբ ու պինդ ցանցերի միջոցով։ Եւ մարդ չէ կարողանում հաշուել, թէ վերջի վերջոյ գիւղական աղջիկը ինչ է տանում տուն իր աշխատած եօթը կոպէկներից։

Միայն խանութը չէ նրան իր ցանցերի մէջ պահում։ Կարմիր տետրակը ունի կանոններ, որոնք առաձգական են որքան կամենաք։ Այդ կանոններից մէկը պարտաւորեցնում է գործաւորին, որ եթէ նա ուզում է ուշանալ գործից, պիտի վաղօրօք գրաւոր թոյլտուութիւն ստանայ գործարանի կառավարչից. հակառակ դէպքում, այսինքն երբ նա ուշանում է առանց այդպիսի գրաւոր թոյլտուութեան, նա պարտաւոր է իւրաքանչիւր ուշացած օրվայ համար տուգանք վճարել 25 կոպէկ։ Եօթը կոպէկ օրավարձ և 25 կոպէկ տուգանք։ Վատ չէ գործարանի համար։ Բացի դրանից, եթէ գործաւորը չէ ուզում աշխատել, եթէ նա մտադիր է հեռանալ գործից, պիտի այդ մասին յայտնէ 15 օր առաջ և դարձեալ գրաւոր կերպով։

Մի խօսքով, խեղճ, գղգղված գեղջկուհին, օրեկան 7 կոպէկի պէս մի գումար ստանալու համար, պիտի ունենայ իր հետ մի ամբողջ կանոնագիրք։ Նա հիւանդացաւ, պիտի գրէ վարչութեան. նրա տանը մի դժբախտութիւն պատահեց, պէտք է ամենից առաջ յիշել, որ թուղթ պիտի ուղարկվի գործարանին։ Մի որ և է անակնկալ պատճառով նա այսօրվանից անկարող է շարունակել իր աշխատանքը։ Այդ չէ կարելի. նա 15 օր առաջ պիտի իմանար, թէ պատահելու է այդ անակնկալ պատճառը և թուղթ ուղարկէր գործարան։

Եւ երբ աչքի առաջ էք բերում, որ այդ կանոնները հրատարակված են մի գաւառում, ուր տգիտութիւնը, անգրագիտութիւնը համատարած է և ծծված ժողովրդի արեան ու ոսկորների մէջ, դուք չէք կարող չը հիանալ կապիտալի ստեղծած այդ կանոնագիրական թակարդների վրա։ Ի՞նչպէս չը հիանալ։ Եօթը կոպէկ ստացող մի գործաւոր կին 3½ օր ձրի պիտի աշխատէ, եթէ մի օր ուշանայ։ Ահա ինչու համար է կապիտալը այնքան շեշտում գրաւոր բառը։ Հարկաւոր էր այդ բառը, շատ հարկաւոր։ Դա այն երկար ու բարակ կապանքն է, որով կաշկանդվում, փափաթվում ու տարկանում է եօթը կոպէկ ստացողը։

Ես չը գիտեմ, գոյութիւն ունի՞ եօթը կոպէկից պակաս վարձատրութիւն։ Բայց եթէ լինի էլ, ոչինչ միխիթարութիւն չը կայ դրանից։ Միխիթարութիւն չէ և այն, որ 7 կոպէկից աւել վարձատրութիւն էլ է տրվում։ Ես տեղեկացայ, որ 10—12 տարվայ աշխատաւոր կանայք ստանում են ամենաբարձր օրավարձը—25 կոպէկ։

Անգթութեան, հարստահարութեան մի ամբողջ սիստեմ։ Հեռու գործարանական հսկողութեան աչքից, կորած գաւառի մի անկիւնում, տգիտութեան, անճարութեան ծովի մէջ խեղդված մարդիկ ամբողջ օրերով աշխատում, տանջվում են։ Եւ ինչու համար։

Կարմիր տետրակը արտասանքով գրված պատմութիւն է անում։ Նա ասում է, թէ ինչպէս է կազմվում հարստութիւնը. նա իր վտիտ թեւանցներով, իր կարճիկ տողերով հայ գեղջկուհու օրն է պատմում. ասում է թէ ինչեր է կրում այդ նահատակը, այո, ամբողջովին արտասանք է։

Մի հատ տետրակ միայն հասաւ ինձ։ Բայց քանի քանի այդպիսի տետրակներ են մնում այնտեղ, քաղցած գիւղերում, մնում են լուռ ու մունջ, պատմում են իրանք իրանց համար և լող ու տեսնող չեն գտնում։

Հաւաքէք այդ տետրակները, արտասանքի առուներ կը կազմվեն։

Լ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօր, կիրակի, յունիսի 1-ին, ժամը 1-ին կէսօրից յետոյ կը կայանայ Թիֆլիսի Լ-ին կլասիքական գիմնազիայի դահլիճում Մոսկվայի Կայսերական Հնագիտական ընկերութեան կովկասեան բաժնի նիստը։

—

Քաղաքային ֆինանսական յանձնաժողովը այս օրերս քննեց ազգաբնակութեան միօրեայ ժողովրդագրութիւն կատարելու հարցը Թիֆլիսում։ Յանձնաժողովը, սկզբունքով չը հերքելով միօրեայ ժողովրդագրութեան օգտակարութիւնը, սակայն այն միտքը յայտնեց, թէ աւելի լաւ կը լինէր հիմնել քաղաքային ստատիստիական բիւրո։ Հիմնելով այդ բիւրոն, քաղաքը մի անգամ ընդ միշտ կազատվի միօրեայ ժողովրդագրութեան համար եղած ծախսերից։ Յանձնաժողովի նախագծով, բիւրո կազմելու համար կը պահանջվի մինչև 3040 րուբլի։ Յանձնաժողովը անհրաժեշտ է համարում բանալ բիւրո ներկայ տարում, և այդ պատճառով խնդրում է դումար բիւրոն պահպանելու համար։

—

Բերլինի հայոց ցուցահանդէսի կոմիտէը յայտնում է, որ նիւթական միջոցների պակասութեան պատճառով ցուցահանդէսը յետաձգվում է մի քանի ամսով։

—

Զինուորական բժշկական գլխաւոր վարչութիւնը կազմակերպում է բժիշկների մի խումբ, որ այս ամառ պէտք է ուղարկվի Թերեքի շրջանը մալարիա հիւանդութեան վերաբերմամբ գիտական հետազօտութիւններ կատարելու։ Հետազօտութեան աշխատանքները կը սկսվեն յուլիս ամսից։ Նոյնպիսի հետազօտութիւններ կատարելու համար յունիս ամսի միջին թուերին Անդրկովկասեան երկաթուղու Եալսա կայարանը կը հանի մի մասնաժողով, որ ուղարկվում է Մոսկվայի Գիրոգովեան բժշկական ընկերութիւնը։ Մասնաժողովի գործունէութեանը կը մասնակցեն բժիշկ Սախարով, Անդրկովկասեան երկաթուղու վարչութեան կողմից, և մի բժիշկ կովկասեան բժշկական ընկերութեան կողմից։

—

Բագուի ոստիկանութեան տ՝ղեկութիւնների համեմատ, ինչպէս հաղորդում է «Бак. Изв.» լրագիրը, հայ-բողոքականներ Բագուում հաշուում են 295 տղամարդիկ և 232 կանայք։

—

Թագաւոր Կայսրը, 1903 թի յունվարի 31-ին, Բարձրագոյն հաստատել բարեհաճեց մինիստրների կոմիտէի կանոնադրութիւնը ակցիոնէրական ընկերութիւններ հիմնելու մասին. 1) «Էլէկտրական ֆունիկուլէր Թիֆլիսում», որ հիմնվում է էլէկտրական ֆունիկուլէր շինելու և շահագործելու համար Թիֆլիսում, այն պայմանագրի հիման վրա, որ կապել է 1900 թի յուլիսի 8-ին Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը բէլգիահպատակ Ա. Կ. Ռօբիի հետ. ընկերութեան հիմնական դրամագլուխը 300,000 րուբլի է։ 2) «Կովկասեան—Սև-ծովեան փայտ-արդիւնաբերական ընկերութիւն, որ հիմնվում է փայտ կտրելու համար Քութայիսի նահանգի Լէչխումեան գաւառի Սվանէտեան ամառանոցից, այն պայմանի հիման վրա, որ կապել է 1900 թի դեկտեմբերի 16-ին Ի. Ա. Վէրմիշեվ Քութայիսի նահանգի պետական կալուածքների վարչութեան հետ, նոյնպէս և շահագործելու համար ուրիշ անտառապատ ամառանոցներ Կովկասում փայտավաճառութեան համար։ Ընկերութեան հիմնական դրամագլուխը կազմում է 750,000 րուբլի։

—

«Кавказ. М. Воды.» լրագիրը հաղորդում է, որ մօտ օրերումս Մոսկվա—Կուրսկ երկաթուղային գծի վրա, մի գնացքում, որ հարաւից ուղևորվում էր Մոսկվա, տեղի ունեցաւ ահագին սկանդալ։ Գիշերով երկաթուղային գողերը կողոպտեցին երկրորդ կլասի բոլոր ճանապարհորդներին։ Կողոպտվեցին թէ տղամարդկանց և թէ կանանց բոլոր շորեղէնները, որոնք գիշերով հանված էին և կախված վագոնի պատերից կամ դրված ցանցերի վրա։ Այդ ընդհանուր կողոպտումը նկատեցին իրանք ճանապարհորդները առաւօտեան, արթնանալուց յետոյ։ Մնալով առանց շորերի՝ տղամարդիկ և կանայք մեծ աղմուկ բարձրացրին։ Մի քանիսի ծանրոցքի մէջ գտնվեց քիչ քանակութեամբ հագուստեղէն, մնացածները ոչինչ չը գտան հագնելու։ Դրութիւնը կրիտիկական էր։ Այն անձինք, որոնք ծանօթներ ու բարեկամներ ունէին Մոսկվայում, սկսեցին հեռագիրներ ուղարկել՝ խնդրելով շորեղէններ բերել Մոսկվայի կայարանը, միւսները հեռագիրներ էին ուղարկում հիւրանոցատէրերին, որ ծածկած կառքեր ուղարկեն կայարան նրանց համար։

—

«Черн. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ Բաթումի քաղաքային վարչութեան անդամի թեկնածուներից մէկն էլ պ. Վերմիշեանն է։

—

Մեզ ուղարկված է տպագրելու հետևեալ նկատողութիւնը. «Թիֆլիսի Վանքի եկեղեցու ծխականները առհասարակ անտարբեր են դէպի իրանց պարտաւորութիւնները։ Այս օրերս լրագրութեան մէջ լոյս տեսաւ մի հրաւէր. գործակալ քահանան հրաւիրում է ծխականներին Սարգիս Ալիխանեան անունով մի ինչ որ երիտասարդին ընդունելու հոգևոր կոչման մէջ այդ եկեղեցում սպասաւորելու, այսինքն ապագայում այդ եկեղեցում քահանայանալու համար։ Եւ այսպիսի մի հրաւէր լինում է ոչ ծխի ցանկութեամբ. ծխականները այդ հրաւէրից են իմանում, որ եկեղեցին մի մշտական սպասաւորող տիրացուի կարիք ունի, և հոգևոր իշխանութիւնն է մէկին մատնացոյց անում և ասում. «համեցէք այս ինչին ընտրեցէք։ Սա ծուխի իրաւունքների խախտումն է. ծխականները իրանք պիտի իմանան թէ ինչ է հարկաւոր եկեղեցուն և ով կարող է արժանաւոր պաշտօնեայ լինել։ Բայց Վանքի եկեղեցու ծխականները իրանց պարտաւորութիւնները չեն հասկանում և հոգևորականները փառաւորապէս օգտվում են այդ անտարբերութիւնից՝ իրանց ցանկացած մարդկանց առաջ քաշելու և պաշտօններ տալու համար։ Հրաւիրողները լաւ գիտեն, որ առաջին ժողովը չի կայանայ օրէնքի պահանջած թւով ծխականներ չը գալու պատճառով։ Եւ նշանակում են երկրորդ ժողով, ուր իրանց ցանկացածներին անց են կացնում 5—10 ձայնով։ Եւ այսպիսով ընտրութիւն է կատարվում ամբողջ ծխի համար։ Բայց մինչև երբ պիտի շարունակվի այս անարդարութիւնը։ Թէ ծխականները և թէ հոգևորականները երբ պիտի հասկանան իրանց պարտաւորութիւնները, լուրջ վերաբերվեն եկեղեցու շահերին»։

—

Թիֆլիսի առևտրական հասարակութեան որոշման համաձայն, տեղական առևտրականների աւագը միջնորդութիւն յարուցեց հատատելու հրաժարական տուած փոխ-գնդապետ Ց. Տիգրանեանին Թիֆլիսի առևտրական դպրոցի հոգաբարձական խորհրդի նախագահ, իսկ անձնական ազնուական Ա. Ի. Մանթաշեանին, տոհմական պատուաւոր քաղաքացի Պ. Ի. Ալիբէգեանին, տոհմական պատուաւոր քաղաքացի Ի. Ա. Շադինեանին և Թիֆլիսի 1-ին գիլդիայի վաճառականներ Ա. Ն. Միլեանցին, Ա. Ա. Էնֆիաճեանցին—վերոյիշեալ դպրոցի հոգաբարձական խորհրդի անդամներ։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ

մը ընելով ձեզի խրկեցինք։ Միտք ունինք նորէն ալ խրկելու։ Բայց այդ նուէրը քէֆ ընելու համար չէ, որ կուտանք կոր։ Ուզէինք նէ առատակով մենք ալ քէֆ կընէինք։ Մենք տրէինք, որ հաց, միս, զարզավաթ առնես ուտես, չէքի խայբխով ծովերուն վրա քէֆ ընես։ Ծով տեսնել կուզես նէ, խահուէ մը նատէ, քանի փարայ տուր, ծով ալ կը տեսնես, խահուէ մըն ալ կը խմես։ Հէմ զիյարէթ, հէմ խիժարէթ։ Ծովու օդ ալ առնել կուզես նէ, քառասուն փարայով Սարբեարէն Պեօյիւքտերէ կերթաս կուգաս։ Առնք կեցած իքէն, ինչ ըսել է, էֆէնդիմ, ուրիշին ստակովը սանտալ բռնել, ամեն իրիկուն 10 ղուրուշ տալ (80 կոպէկ)։ Անկէց եռքն ալ կելլեն կրսեն որ վաճառականները բարեգործութիւն չեն ըներ։

Առանց ձանձուն հանելու, Ադամեան դողդղալով դուրս կելլէ։ Սահակին չափ բարեբաղդ ալ չէր, որ գրպանը դեռ մնացորդ մը ունենար ու զայն «բարերարներուն» երեսին նետէր։

Ու իրիկունը այս անցքը իր բարեկամներուն պատմելով կրսէր.

—Ինծի՞ հինգ ոսկի խրկել տուիք, ու այսօր հինգ ամսուան կեանքս պակսեցաւ ինէ։

—

«Բարեգործութիւնը» եթէ արուեստագէտի մը կեանքը ամիսներով կը կարճեցնէ, արդեօք ինչ ինչ պարագաներու մէջ չի՞ կարճեցներ և հայ ժողովրդին կեանքն ալ։ Հարցումը, նոյն իսկ իր տարակուսական ձևին տակ, հաւանօրէն, կամ ստուգօրէն, ամբարշտութիւն համարուի շատերուն աչքին։ Եւ սակայն այդ ամբարշտութեան մեղքը գործեցի, երբ լրագիրներէն տեղեկացայ բարեգործական նպատակաւ մեծ նուիրատուութեան մը լուրը։ Ամանց վարանումի պիտի ըսեմ՝ գուժը։ Ազգային ժառանգաւորութիւն մը, որուն աղէտաբերութեան մեծութիւնը քիչերը պիտի կրնան ըմբռնել, կամ՝ զգալ։

Ուրեմն, ահա ինչ որ թերթերը կը գրեն։ «Եգիպտահայ երիտասարդ մը, Լևոն Յակոբեան, որդի հանգուցեալ Յակոբեան Թագաւոր փաշայի, հարիւր հազար ֆրանկի գումար մը (մօտաւորապէս 40,000 րուբլի) ազգային բարեսիրական գործերու յատկացուցած է Պարիզ, վասահելի քանի մը անձնաւորութիւններու ձեռքով։ Թերթերը այս պահուս քովս չունիմ, բառ առ բառ օրինակելու համար, բայց իմաստը ճշտութեամբ ամփոփեցի։ Այս նուիրատուութիւնը ինչու դժբաղդութիւն մը համարիլ, ինչու արտմիլ անոր համար։ Ա՜հ, անոր համար որ վրայդիրք երևոյթ մըն է—տեսակ մը եպիֆէնօմէն—այն հոգեկան հիւանդութեան, որմէն ժողովուրդը օրէօր աւելի սատկապէս կը վարակի, և որուն գրական, ողորմասիրական, բարեգործական ախտանիշերը այս էջերուն մէջ քիչ շատ կը սեւատողենք։

Տարիներ առաջ, մայիսի սասնկ աղուոր օր մըն էր, 1897-ին, որ արտասահմանի հայոցմէ ոմանք յուսացին թէ մեր ցեղային ըղձանքները պիտի սկսին յոյսերու աշխարհէն դէպի իրականութիւն յառաջանալ խոշոր քայլով մը։ Երիտասարդ մը՝ այդ մի և նոյն Լևոն Յակոբեանը՝ 1896-ի վերջին ամսուան մէջ գրաւոր խոստացած էր կէս միլիոն ֆրանկ (200,000 րուբլի) ազգին տալ. և ահա 1897-ի փետրուարին 40,000 ֆրանկ, և մայիսին՝ 60,000 ֆրանկ առաջին վճարումները ընելէ յետոյ, հետզհետէ պիտի յանձնէր, պիտի ամբողջացնէր իր դրամական յանձնառութիւնը։ Բարձրագոյն պաշտպանութեամբ ու զօրաւոր դրամատէրներու աջակցութեամբ այդ կէս միլիոն ֆրանկը կարելի պիտի ըլլար շուտով մէկ միլիոնի բարձրացնել։ Ու ալ այնուհետև ճամբան բացուած էր դրամական մեծ հանգանակութեանց համար։ Ահա այդ արդէն տրուած հարիւր հազար ֆրանկի գումարն է որ, վեց տարուան անգործ սպասումէ ետքը—բարեսիրական կամ կրթական ձեռնարկներու կը յատկացուի, առանց մնացեալ 400,000 ֆրանկին դանձմանը, առանց այն օժանդակութեանը զոր խոստացած էին «զօրաւոր դրամատէրները»։ Ու բարձրագոյն պաշտպանն ալ կը հանդչի գերեզմանը։ Եւ հիմակ ոչ երիտասարդ նուիրատուն կը մեղադրեմ, ոչ իր դրամատէր բարեկամները, ոչ ալ բարձրագոյն պաշտպանը։ Ո՛չ, իրենք երբէք յանցանք չունին։

Բայց ինչու հեռատեսի անցեալ դէպքերու. մանաւանդ որ հոս ոչ տեղն է, և ոչ ալ հիմակ ժամանակը ծանրանալ մօտաւոր անցեալի մը վրա։ Այս հարևանցիկ յիշատակութիւնը, պարզապէս ինքնարդարացման փաստ մըն է այն խոր ցաւին համար, զոր բարեկամներէ ոմանց հետ զգացի, հարիւր հազար ֆրանկի գումարին բարեսիրական գործերու յատկացման լուրը առնելուս։ Ի՞նչ նպատակ։ Զեմ գիտեր։ Ներկան անծանօթ է ինծի։ Ըլլայ թող ինչ որ կուզէ. դժբաղդութիւնը՝ գծուած ճամբէն շեղումին մէջն է. ու՝ վեց տարուան կորուստը, որ անդարմանելի է։

—

Անդարմանելի կորուստ։ Ո՛չ։ Բայց ահա այդ օրէն յետոյ Զէյթունի բարձունքը նորէն դրօշակ մը կը պարզուի, անգամ մը ևս մթութեան նշանակ հայ ժողովրդին համար։ Բայց դրօշակին գոյնը։ Կարմիր թէ ճերմակ։ Գատասխանը կարծես արդէն մասամբ տուած է Աղեքսանդրիա կազմուած «Զէյթունի բարեսիրաց ընկերութիւնը» որուն վրայ արդէն խօսեցանք։ Ու հիմակ ձեռքս է այդ մի և նոյն Աղեքսանդրիա հրատարակուող թերթ մը, որ գտնէ Զէյթունի մասին ստոյգ տեղեկութիւն մը տալու ձեռնհաս է, վասն զի խմբագիրը Զէյթունցի է։ Կը յիշատակէ Զէյթունէն ստացած մէկ նամակը ըսելով.

«Այդ նամակը պարզէլէ ետքը քրիստոնեայ գայմագամին (կառավարիչը որ յոյն մըն է) անճարակութիւնն ու պաշտօնին անկարողութիւնը, սուրբ Աստուածածնի վանքին մէջ մեր երանելի Կարապետ եպիսկոպոսին անփոփոխ կենցաղավարութիւնն ու առաձգական անտարբերութիւնը մեր ազգային գործերուն համար, լեռնցիներուն՝ հեղնութեան մօտեցող համակերպիլը նորամուտ «ռէժիմին» այսպէս շարունակութեանը, դատապարտելէ ետքը Պօլսոյ Ազգային Պատրիարքարանին քարացած անազգայութիւնն ու անհոգութիւնը Զէյթունի և անոր հարիւրաւոր որբերուն նկատմամբ, նկարագրելէ ետքը խեղճ, անտերունչ ու անպատսպար որբերուն լքումը, կը գուժէ ծաղկախտին երևումը, ըրած աւերը քանի մը շաբաթներէ ի վեր։»

Այս տողերուն մէջ էն ուշագրաւ բառը, աչքի զարնող էն ընորոշ բառը «համակերպութեան» ակնարկութիւնն է, զոր ատորագծեցի։ Տարիներէ ի վեր Կիլիկիայէն հասած ուրիշ տեղեկութիւններ արդէն այդ «համակերպութեան» աղդարարութիւններն էին։ Եւ հիմակ կրնանք կասկածիլ թէ Ուլնիական դրօշակը ճերմակ է։ Անճանաչութեան նշանակ, և անոր համար շուրջը բոլորուելու փութաջանութիւն։ Սպասենք նոր լուրերու։—Բայց՝ սպասել և վախնալ։

***

յանկարծամահ է եղել բազուեցի դրամատէր Առաքել Ծատուրեանը։

—

ԼԱՑՈՑԻԳԻՑ մեզ գրում են. «Բերլինի հայախարանի հայագէտ պրոֆ. դոկտոր Լեմանը այս ամարային սեմեստրի ընթացքում կարդում է «նախահայերի պատմութիւնը»։—Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի դերմանացի նշանաւոր վիպասանուհի Իլզէ Ֆրապան-Ակունեանի աշխատութիւնը, որ նուիրված է հայկական հարցին»։

ԱՐՑԱԳԻՆ ՑԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱԿԱՆ ԴԻՊՔԵՐԻ ԱՌԻԹՈՎ

I

Սերբիայում կատարված յանկարծակի յեղափոխութիւնը գրաւել է ամբողջ աշխարհի ուշադրութիւնը։ Մեծ չէ այդ պատութիւնը. բարձր չէ իր ազգաբնակութեան կուլտուրայով, բայց այնուամենայնիւ վաղուց արդէն վառ հետաքրքրութեան առարկայ է դարձել իր ներքին կեանքով, իր գահի շուրջը պտտվող պայքարով։

Ահա այդ պայքարն էր, որ տարիներ, տասնեակ տարիներ առաջ մերթ ընդ մերթ առիթ էր դառնում արիւնահեղ դէպքերի, ներքին երկպառակութիւնների. դա էր, որ նախապատրաստեց ներկայ ա՛ցքերի հիմքը. ուստի արժէ հակիրճ ձևով առաջ քաշել սերբերի անցեալը, ազատութեան և իրաւունքի համար մղած կռիւների նկարագիրը, որպէս զի աւելի պարզ լինեն ներկայ դէպքերը։

Սլաւեանական ցեղին են պատկանում սերբերը։ Նրանք Բալկանեան թերակղզու վրա բնակութիւն են հաստատել VII-րդ դարում, բայց բաւական երկար ժամանակ ապրել են սնմիաբան, թշնամաբար, առանց մի ամբողջութիւն կազմելու, առանց պետական միութիւն առաջացնելու։ Վերջապէս IX-րդ դարում սերբական մանրիկ ցեղերը միանում են և կազմում սերբական թագաւորութիւն—Բիւզանդիայի գերիշխանութեան տակ *)։

Բայց սերբերն ամբողջապէս չենթարկվեցին յոյների քաղաքացիական և կրօնական ազդեցութեանը, այլ ամեն կերպ աշխատեցին ձեռք բերել ինքնուրոյնութիւն։ XII-րդ դարում Ստեֆան Նեմանյանը օգտվեց այդպիսի տրամադրութիւնից և կազմեց սերբական անկախ թագաւորութիւն, որը ժամանակի ընթացքում աւելի ու աւելի առաջադիմեց, Ստեֆան Դուշանի օրերում հասաւ իր մեծութեան գագաթնակէտին և ապա կամաց-կամաց հալ ու մաշ լինելով ներքին երկպառակութիւններից, վերջապէս ընկճվեց թիւրքական ծանր լծի տակ։

1389 թ. յունիսի 15-ը միշտ անմոռաց կը մնայ սերբերի համար *)։ Այդ օրը տեղի ունեցաւ Կոսսովոյի յայտնի ճակատամարտը. այդ օրը սերբական Լազար թագաւորը իր ժողովրդի հետ միասին վերջին փորձն արեց թիւրքերի յաղթական արշաւանքի առաջն առնելու համար։ Հոսեց արիւնը, ընկան զոհերը. Միլոշ իր երկու ընկերների հետ հերոսական համարձակութեամբ գնաց թիւրքաց բանակը, սպանեց սուլթան Մահմուդին, բայց ապարդիւն անցաւ այդ բոլորը։ Թիւրքական հզօր ոյժի առաջ ընկճվեց արիւնաշաղաղ Սերբիան, կորցնելով իր թագաւորին ու ընտիր զաւակներից շատ շատերին։

Սերբերի «Աւարայրն» էր Կոսսովո դաշտը, որի անուան հետ կապված յիշողութիւնը, սերունդից սերունդ անցնելով, միշտ վառ էր պահում վրիժառութեան տենչը, զարգացնում էր սերբ ժողովրդի ատելութիւնը դէպի թիւրքերն ու նրանց բռնակալ իշխանութիւնը։

Եւ ահա դեռ XVIII-րդ դարի վերջերում ազատութեան սիրահար սերբ «իւնակները» քաշվում են լեռները, հայդուկային խմբեր են կազմում և իրանց հերոսական գործերով աշխատում են գրգռել թմրած ժողովրդի հայրենասիրութիւնը։

Եւ ահա գալիս է այդ բոպէն, բացվում է Սերբիայի արշալոյսը իր հետ բերելով լայնածաւալ ապստամբութիւնը (1804 թ.)։ Այդ ապստամբութեան ղեկավարն է դառնում իր քաջութեամբ հռչակված Կարա-Գէօրգին—այժմեան յեղափոխականների կողմից Սերբիայի թագաւոր հրատարակված Պետր Կարագէօրգիեվիչի նախահայրը։

Ե. Թ.

*) A. Ранкѣ: „Исторія Сербіи“ եր. 3.

*) E. von Laveleye: „Die Bolkanländer“ հատ. II. եր. 13.

ԱՐՑԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սերբիայի սպանված թագաւոր Ալէքսանդր I Օբրենովիչ ծնվել է 1876-ի օգոստոսի 14-ին, ուրեմն 27 տարեկան երիտասարդ հասակում նա զրկվեց կեանքից։ Նրա հայրը՝ Միլան I և մայրը՝ Նատալիա թագուհին, իրանց ընտանեկան դժտութիւններով լաւ օրինակ չէին կարող ծառայել իրանց որդուն, ուստի և Ալէքսանդրի դաստիարակութիւնը շատ անբնական պայմանների մէջ տեղի ունեցաւ։ 1889 թ. մարտի 6-ին Միլան ստիպվեց հրաժարվել գահից և Սերբիայի թագաւոր հրատարակվեց նրա որդի Ալէքսանդրը։ 1900 թ. օգոստոսի 5-ին, նա ամուսնացաւ այրի Դրագա Մաշինի հետ և այդ ամուսնութիւնը աւելի վատթարացրեց նրա վիճակը։

—Կասկած չէ կարող լինել, որ Թիւրքիայի բոլգար ազգաբնակութեան դրութիւնը պէտք է շատ ողբալի լինի։ «Politische Correspondenz» և ուրիշ լրագիրներ շատ մռայլ գոյներով են նկարագրում Թիւրքիայի եւրոպական նահանգների գործերի դրութիւնը։ Աղրիանոպոլի շատ գիւղերից հեռացել է արու ազգաբնակութիւնը՝ վախենալով ձերբակալութիւնից և բանտարկութիւնից։ Երկրագործական բոլոր աշխատանքները բարձի թողի են առնված և ազգաբնակութեանը ով է սպառնում։ Աւելի լաւ դրութեան մէջ չէ և մակեդոնական նահանգների անտեսական դրութիւնը։ Շատ տեղերում գիւղական հողերը բարձի թող են առնված, իսկ ուրիշներում զգացվում է բանւորի ձեռքերի մեծ պակասութիւն, այն ինչ, գոյութիւն ունեցող քաղաքական պայմանների պատճառով, շատ են վնասվել թէ գոյքերը, թէ անասունները և թէ ցանքերը։ Շատ վատ բերք է սպասվում այս տարի։ Քաղաքական պայմանների անբնականութիւնը ազդում է թէ առևտրի և թէ արդիւնաբերութեան վրա։

—Այժմ, որ կատարվեց Սերբիայում արիւնահեղ դրաման, հաւանական է թւում այն լուրը, որ վերջերս հաղորդեցին եւրոպական լրագիրները, թէ Դրագա թագուհուն կամեցել են թունաւորել կերակրի միջոցով, բայց չէ աջողվել։

—«Fortnightly Review» հանդէսում զետեղված է մի յօդուած այն փոփոխութիւնների մասին նոր քաղաքականութեան մէջ, որոնք կարող են առաջացնել Անգլիայի մերձեցումը Ֆրանսիայի հետ։ Այդ յօդուածի առիթով «Independ. Belge» լրագիրը գրում է. «Ամենից առաջ բոլորովին ակնյայտ է, որ Ֆրանսիան չի զոհի իր դաշնակցութիւնը Ռուսաստանի հետ Անգլիայի հետ համաձայնութիւն կայացնելու համար և եթէ Անգլիայում ցանկանում են, որ այդ համաձայնութիւնը Ֆրանսիայի հետ իրագործվի, Լօնդօնում պէտք է դէպի Ռուսաստանը թշնամութեան ստուերն անգամ թողնեն։ Սակայն, այն ինչ որ կատարվում է այժմ Անգլիայում, դժուար թէ այդ սպասելի լինի։ Անգլիական լրագիրը. ասում է, ճիշդ է, թէ Ռուսաստանին պէտք է գործողութեան ազատութիւն տալ Մանջուրիայում, եթէ նա դրա փոխարէն թոյլ կը տայ Անգլիային նոյնպիսի ազատութեամբ գործել Պարսից ծոցում։ Սակայն, անդլիական քաղաքական լրագիրը մոռանում է, որ Անգլիան կապել է դաշնակցութիւն Եապոնիայի հետ հէնց նրա համար, որ խանգարէ ռուսներին հաստատվել հիւսիսային Չինաստանում և այդտեղից ապառնալ Եապոնիայի շահերին Կորէյում։ Անգլիան պէտք է օգնէ նրանով, որ խախտէ իր դաշնակցութիւնը Եապոնիայի հետ, իսկ այդ անհնարին է ներկայումս։

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Երէկ առաւօտեան, երբ անցնում էի փողոցով, նկատեցի, որ ինձնից առաջ դանդաղ քայլերով գնում է իմ ծանօթ Անիկեանը։ Ես արագացրի իմ քայլերը և հասայ նրան։

Անիկեանը մտածմունքների մէջ էր և ինքն իր հետ խօսում էր։

—Չեմ հասկանում, չեմ հասկանում, մրմնջում էր ինքն իրան։

—Բարև Անիկեան, զոչեցի ես։ Այդ ինչ մտածմունքների մէջն ես։

—Ոչինչ, նկատեց նա։ Ինձ զբաղեցրել էին այսօրվայ հեռագիրները սերբական գործերի մասին։ Ես ոչինչ չեմ հասկանում։

—Սպասենք մի քանի օր և ամեն բան կիմանանք բոլոր մանրամասնութիւններով, վրա բերեցի ես։

Անիկեանը ծանօթ էր սերբական պատմութեան և Սերբիայի քաղաքական կուսակցութիւնների ծրագիրների ու ձգտումների հետ։ Նրան զարմացնում էր զինուորական դասի այնքան մեծ մասնակցութիւնը ներկայ գործերում և ճգնաժամի այդքան սուր և ողբերգական ելքը։

—Այս անգամ, նկատեց նա, հասարակական հոսանքները խառնվել են տոհմական միտումների հետ, ծրագիրները խառնվել են կրքերի և բռնկումների հետ և ահա առաջ են բերել տնսպասելի դէպքեր և յուզիչ տեսարաններ։ Բայց մութ կէտեր դեռ շատ կան։

—Ձեր կարծիքը, հարցրի ես։

—Երկու տարի առաջ սերբական թագաւոր Ալէքսանդրը շատ սիրելի էր իր ժողովրդին։ Այդ թագաւորը տուեց Սերբիային լայն քաղաքական իրաւունքներ, որոնց մասին երկար տարիներ երազում էր սերբական ժողովուրդը։ Ով կարող էր այն ժամանակ կարծել, թէ այդ սիրված ու պաշտված թագաւորը պէտք է այսպիսի ողբերգական վիճակ ունենայ։ Իրերի ընթացքը տակն ու վրա տրաւ ամեն բան։ Ալէքսանդրը զաւակ չունէր, իսկ գահը առանց ժառանգի չէր կարող մնալ։ Եւ ահա նրա կնոջ կողմնակիցները ամեն ջանք գործ էին դնում, որ ժառանգ հրատարակվի թագուհու եղբայրը։ Այդ բանը դժգոհութիւն էր պատճառում սերբերին։ Իսկ Ալէքսանդրը այդ ժամանակ իր մերձաւորների թելադրութեամբ մի ճակատագրական սխալ գործեց և յետ խլեց ժողովրդից իր տուած լայն քաղաքական իրաւունքները։ Դա մի անապատելի խիստ հարուած էր ժողովրդի համար։ Զրկվել լայն իրաւունքներից և տեսնել իր վրայ փթթած թագուհու ազգականներին, իբրև ժառանգների—ծանր էր սերբ ժողովրդի համար։ Դժգոհութեան հողը պատրաստված էր։ Եւ ահա առաջ եկան մարդիկ, որոնք օգտվեցին այդ տրամադրութիւնից։ Բայց ես չեմ հասկանում, թէ ինչ նոր հանմանումներ են կազմվել և թէ ինչպէս է ժողովրդի իսկական կարծիքը կատարվող եղելութիւնների մասին։

—Հեռագիրները ասում են, որ հրճուանք է տիրում Բելգրադում, յիշեցի ես։

—Այդ գիտեմ, վրա բերեց Անիկեանը. աւելի հաւանական է կարծել, որ ժողովուրդը շուարված է և սպասողական դիրքի մէջ է։ Մի բանի հետ ես չեմ հաշտվում, մի բան ինձ տանջում է, այն, որ այդպիսի սարսափելի սպանդանոց դարձաւ Բելգրադը։ Բայց մենք ինչ դատաւոր կարող ենք լինել։ Մենք կարող ենք ասել սերբերին... արիւն ձեր ի գլուխ ձեր, դուք էք ձեր երկրի տէրը, ձեր գործերի կարգադրողը, և նրա համար պատասխանատուն մարդկանց և Աստուծու առաջ։

—Պետութիւններն էլ որոշել են թողնել սերբերին կարգադրելու իրանց գործերը, ինչպէս գիտեն և կարող են։

—

Այնուհետև Անիկեանի դէմքը պարզվեց և աչքերը փայլեցին։ Պատմելով ինձ իր գիտեցածը, հաղորդելով ինձ իր ենթադրութիւնները, նա հանգստացաւ և ազատվեց լարված դրութիւնից։ Նա սկսեց կատակներ անել։

Կատակների նիւթը նոյն սերբական գործերն էին։

—Հետաքրքրական է, ասաց նա, թէ ինչպէս պէտք է թիւրք լրագիրները կ. Պոլսում յայտնեն Սերբիայում տեղի ունեցած եղելութիւնների մասին։ Նրանք իրաւունք չունեն գրել, որ Սերբիայում սպանութիւններ են եղել։

—Այո, ֆրանսիական նախագահ Կարնօի մասին նրանք գրել էին, որ նա քնել է և յանկարծ անշնչացել։

—Այս անգամ ժպտաց Անիկեանը, շատ դըժուար դրութեան մէջ պէտք է լինեն, որովհետև քնած ու անշնչացածների թիւը չափազանց մեծ է։ Թիւրքական լրագիրների ընթերցողները պէտք է շուարած մնան, որ մի անգամից անշնչացել են բազմաթիւ մարդիկ։ Երևակայեցէք մի այսպիսի նկարագրութիւն։ «Բելգրադում մայիսի լոյս 29-ի գիշերը տեղի է ունեցել դժբաղդութիւն։ Թագաւոր Ալէքսանդրը, թագուհի Դրագան, մինիստր նախագահը, թագուհու եղբայրները և մինչև հարիւր անձ պալատական անձերից ողջ առողջ պառկում են քնելու և յետոյ հիւանդանում են, թունաւորվում, մարում և մեռնում։ Սենեակներում նկատված է խառնաշփոթ վիճակ, իրերը դէս ու դէն են թափված անկարգ դրութեան մէջ։ Միջոցներ են ձեռք առնված ամեն բան կարգի բերելու։ Սերբերը խնդրում են սուլթանից թոյլ տալ հրաւիրելու իշխան Պէտր Կարագէօրգեվիչին թագաւոր իրանց համար։ Աստուած կարողութիւն տայ աշխարհի հզօրներին»։

Մենք բաժանվեցինք։

Վրդին

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

30 մայիսի

ԲԵԼԳՐԱԴ։ Կառավարութիւնը հրատարակեց հետևեալը. «Մի քանի պալատական տարաձայնութիւններ առաջ բերին զօրքի միջամտութիւն և կոնֆլիկտ, որի ժամանակ սպանվեցին թագաւորը և թագուհին։ Երկրում կարգը և իրաւակարգութիւնը պահպանելու նպատակով, քաղաքական բոլոր խմբերի ներկայացուցիչները շտապեցին կազմել ժամանակաւոր կառավարութիւն, վերականգնել մինչև մարտի 23-ը գոյութիւն ունեցող սահմանադրական կազմը, գումարել ժողովրդական ներկայացուցիչներն, որոնք ընտրված են 1901 թ. ապրիլի 6-ի սահմանադրութեամբ, այն նիստում, որ կը կայանայ յունիսին։ Ազգի ներկայացուցչութիւնը ձեռք կը զարկէ միապետի ընտրութեանը և կը կայացնէ ուրիշ որոշումներ, որոնց անհրաժեշտութիւնը պայմանաւորվում է իրերի նոր դրութեամբ։ Համաձայն զեկուցումներին զինուորական և քաղաքացիական իշխանութիւններից, կարգը երկրի մէջ ոչ մի տեղ չէ խախտված։ Կառավարութիւնը կը հսկէ նրա պահպանութեան վրա։ Նա համոզված է, որ գործելով այդպէս, նա կապահովէ իրերի նոր կարգի համար եւրոպական բոլոր պետութիւնների համակրութիւնը»։

ԼՕՆԴՕՆ։ Այստեղի սերբական դեսպան Միլիչեվիչ յայտնեց «Ռէյտերի գործակալութեան» ներկայացուցչին, որ Աւստրօ-Ունգարիան և Ռուսաստանը, անկասկած, կընդունեն Սերբիայի իրաւունքը ինքն որոշելու իր վիճակը և միջամտութեան չեն դիմի։

ՍՕՖԻԱ։ Կիսապաշտօնական «Новый Вѣкъ» լրագիրը կտրական կերպով հերքում է ոչ-բարեացակամ լուրերը առաջիկայ պատերազմի մասին։ Բոլոր երկիւղալի տեղեկութիւնները պատերազմի և մոբիլիզացիայի մասին՝ ճիշդ չեն։ Կառավարութիւնը ամեն ջանքեր գործ է դնում՝ պատերազմի հնարաւորութիւնից խուսափելու համար և նոյնպիսի ցանկութիւն տեսնում է Կ. Պոլսում։ Որովհետև լուրերը տարածում են մի քանի պտչտօնեաներ, այդ պատճառով այդ վերջինները կարձակվեն և դատի կենթարկվեն։

ԲԵԼԳՐԱԴ։ Դաւադրութեան անմիջական պատճառն այն էր, որ թագաւորն առաջարկել էր օֆիցերներին գահաժառանգ ճանաչել Լիւնեվիցին։

ՎԻԵՆՆԱ։ «Neue Freie Presse» հետևեալ ձևով է նկարագրում կատարված դէպքերը.—«Գիշերվայ ժամը 1-ին և 30 բոպէին պալատ գնացին 30 օֆիցերներ՝ Մաշինի և Միշիչի առաջնորդութեամբ և 6-րորդ ու 7-րորդ զօրագնդերի մի զօրաբաժնի ուղեկցութեամբ։ Զօրքը շրջապատեց պալատը և ջարդեց դռները, որպէս զի կարողանայ ներս մտնել։ Դարպասներից և դռներից մի քանիսը խսկոյն չը բացվեցին, ուստի դինամիտով թռցրին։ Առաջին սենեակում դաւադիրներին դէմ ելաւ Նաումօվիչը և սպանվեց։ Մի և նոյն վիճակին ենթարկվեց Պետրօվիչը։ Երկրորդ սենեակում գտնվում էր թագաւորը. նա մօտեցաւ լուսամուտին, արագ բաց արեց և օգնութեան կանչեց։ Յետոյ թագաւորը վազեց դէպի թագուհին և գրկեց նրան՝ պաշտպանելու համար։ Դաւադիրները մի քանի անգամ գնդակ արձակեցին թագաւորական զոյգի վրա։ Թագաւորը և թագուհին դեռին ընկան. բայց և այնպէս թագաւորն իր գրկից բաց չէր թողնում թագուհուն։ Այդ մի և նոյն ժամանակ զինուորական խմբերը մտան Պաւլօվիչի, Ցինցար Մարկօվիչի և Թէօդորովիչի բնակարանները։ Առաջին երկուսը սպանված են, իսկ վերջինը՝ ծանր վիրաւորված։ Օֆիցէրները լուր հացրին զինուորանոցները և բանակը։ Առաւօտը օֆիցէրները ձի հեծած անցնում էին փողոցներով և յայտարարում ժողովրդին թագաւորական զոյգի սպանութեան և նոր թագաւոր հրատարակելու մասին։ Ժողովուրդը ողջունում էր ցնծագին բացականչելով «Живіо»։

«Zeit» լրագրին Բելգրադից հաղորդում են, որ յեղափոխութիւնը նախապատրաստվում էր առաջուց։ Արդէն երեք ամիս ամբողջ երկրի մէջ գոյութիւն ունէին կոմիտէներ, որոնք զինուորականների հետ միասին նախապատրաստում էին գործը։ Արքայական զոյգին սպանելու որոշումը ընդունված էր մի քանի ամիս առաջ Բելգրադի օֆիցէրների մէջ։ Ծրագրի իրագործումը յանձնված էր ադիւտանտ Կիրիլ Նաումօվիչին։ Երեկոյեան մօտ 11 ժամին նա ռումբով պայթեցրեց արքայական ննջարանի դուռը և ներս խուժեց սենեակը ռէվոլվերներով զինաւորված Միշիչի և մի քանի ուրիշ օֆիցէրների հետ միասին։ Պահակախումբը նախօրօք հեռացրված էր։ Նաումօվիչ առաջարկեց թագաւորին ստորագրել հրովարտակ գահից հրաժարվելու մասին։ Հրովարտակի մէջ ասված էր, որ իր ամուսնութեամբ թագաւորը անուանարկեց Սերբիան։ Թագաւորը ձեռքն առաւ ռէվոլվերը և տեղնուտեղը սպանեց Նաումօվիչին։ Այն ժամանակ Միշիչ վերցրեց հրովարտակը և առաջարկեց թագաւորին ստորագրել։ Թագաւորը թագուհու հետ միասին վազեց դէպի վերնատունը. օֆիցէրները հետևեցին նրան, մի քանի անգամ ռէվոլվէրներ արձակեցին թագաւորական զոյգի վրա և մահացու կերպով վիրաւորեցին նրանց։ Թագաւորի վրա ռէվոլվէր արձակեց, ինչպէս ասում են, Լուկա Լազարեվիչ։ Կենակում տեղի ունեցող ողբերգութեան ժամանակ փողոցները ամբողջապէս բռնված էին զօրքերով։ Զօրքերը կանգնած էին փողոցներում մինչև կէսօրը. Դունայեան դիվիզիայի հրամանատար Նիկոլիչ կամենում էր մուք գործել քաղաքը թագաւորին պաշտպանելու համար, բայց զօրանոցների մօտ քաղաքի առաջ նրան դիմաւորեց Գագովիչ զօրաբաժնով և ընդհարման ժամանակ սպանվեցին երկու օֆիցէրներ։

31 մայիսի

ՊԱՐԻԶ. Քննելով բելգրադեան անցքերը, «République» գրում է, որ ուրիշ ժամանակ այդ անցքը կարող էր անհանգստութիւն առաջացնել, բայց այժմ Աւստրօ-Ունգարիայի և Ռուսաստանի միջև այնպիսի բարեկամական համաձայնութիւն է տիրում, որ այդ կողմից չէ կարելի վախենալ բարդութիւններից։—«Eclair» մատնացոյց է անում, որ Կարագէօրգիեվիչների ընտանիքը աչքի է ընկնում անկասկած ռուսական մտքերի եղանակով և միացած է Ֆրանսիայի հետ զանազան կողմերով։ Այդպիսի հանգամանքներում կարելի է նախատեսել, թէ որպիսի ազդեցութիւն կը գերակշռէ Բելգրադում։

ՊԵՏՐՕ-ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿ. (Խիվայի մօտ)։ Երէկ տօնվեց Խիվան դրաւելու երեսնամեակը։ Ալէքսանդրօ-Նէվսկի զինուորական եկեղեցու մօտ շարքով կանգնեց տեղական զօրքը և հաւաքվեցին քաղաքի համարեա բոլոր բնակիչները։ Մաղթանքից յետոյ բոլոր ներկայ եղողները թափորով անցան դէպի գերեզմանատուն, ուր եղբայրական գերեզմանի վրա հոգեհանգիստ կատարվեց։ Ապա օֆիցէրները հրաւիրվեցին ընկերական սեղանի։ Հիացմունքով ընդունվեց Թագաւոր Կայսրի կենացը։

ԲԷԼԳՐԱԴ. Արքայական զոյգի մարմինները գիշերով թաղվեցին Օբրէնովիչների ընտանեական դամբարանում, ս. Մարկոսի հին գերեզմանոցի հատուածի մէջ։

ԵՕԿՕՀԱՄԱ. Զինուորական մինիստր Կուրոպատկին ժամանեց Տոկիո։

ԼՕՆԴՕՆ. Հայերի ժողովը երկրորդ ընթերցանութեան ժամանակ ընդունեց ֆինանսական բիլը։

ՎԻԵՆՆԱ. «Neue Freie Presse» տեղեկութիւն ստացաւ Բէլգրադից, որ այն պատգամաւորութիւնը, որը կառաջարկէ Պետրոս Կարագէօրգիեվիչին սերբական թագ, կը հանդիպի նրա հետ Վիեննայում եկող շաբաթ, որտեղից և նա կուղևորվի Բէլգրադ։

ՎԻԵՆՆԱ. Պատգամաւորների ժողով։ Մինիստր-նախագահը, պատասխանելով հարցապնդումին, յայտնում է. «Կառավարութիւնը լուրջ ուշադրութիւն է դարձնում մի այդպիսի պնդումին, յայտնում է. «Կառավարութիւնը լուրջ ուշադրութիւն է դարձնում մի այդպիսի նշանաւոր և ցնցող անցքի վրա։ Ցուսանք, որ նոր ըէժիմը, պատասխանելով երկրի ներքին կարիքներին, կը պահպանէ նոյն բարեկամական յարաբերութիւնները Աւստրօ-Ունգարիայի հետ և կը գործէ խաղաղութիւնը պահպանելու մտքով Բալկանների վրա։ Իւրաքանչիւր սերբիական կառավարութիւն կարող է յուսալ եւրօպական կաբինէտների խաղաղասէր ոգով քաղաքականութեան վրա»։

ՈՕՖԻԱ. Բէլգրադից ստացված են նոր մանրամասնութիւններ։ Ազգաբնակութիւնը ամենուրեք հաւանութիւն տուեց կատարված փոփոխին։ Անհին են երկիւղները Նիշի բերդապահ զօրքի վերաբերմամբ։ Կառավարչական բոլոր ակտերը կրում են «Սերբիական թագաւորութեան կառավարութիւն» վերնագիրը։ Ամեն տեղ հանգստութիւն է և կարգ։ Ցինցար Մարկովիչի կաբինէտի նախկին մինիստրները տնային բանտարկութեան են ենթարկված։

ՀՌՕՄ. Լրագիրների տեղեկութիւնների համեմատ, մինիստրութիւնը վճռեց այսօր հրաժարական տալ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում Թիֆլիսի հաշուով)

Ուրբ. գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 3 ր. (9 ժ.)։

Ուրբ. գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 24 ր. (11 ժ. 22 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 44 ր. (9 ժ. 42 ր.)։

Փոստատար գնացք Բաքուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 18 ր. (10 ժ. 16 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 4 ժ. 25 ր. (5 ժ. 23 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժամ 3 ր.)։

Մարդատար գնացքը Բաքուից դուրս է գալիս ցերեկվայ 1 ժ. 3 ր. (2 ժ. 1 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժ. 3 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 6 ժ. 51 ր. (7 ժ. 49 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 6 ժ. 58 ր. (7 ժ. 56 ր.)։

Փոստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 9 ժ. 23 ր. (10 ժ. 21 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 10 ժ. 51 ր. (11 ժ. 49 ր.), հասնում է Բաքու առաւօտեան 5 ժ. 8 ր. (6 ժ. 6 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 10 ժ. 3 ր. (11 ժ. 1 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 10 ժ. 34 ր. (11 ժ 32 ր.), հասնում է Բաքու ցերեկվայ 3 ժ. 2 ր. (4 ժ.)։

Փոստատար գնացքը Դարսից դուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 57 ր. (4 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրապոլ երեկոյեան 7 ժ. (7 ժ. 58 ր.), Երեւանից դուրս է գալիս 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 5 ժ. 11 ր. (6 ժ. 9 րոպէին)։

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄՆ

Թիֆլիսի Հակա-ալկոհոլական ընկերութեան Հալաբարի բաժանմունքի Մուրաչկոի թատրոնում,

Կիրակի, յունիսի 1-ին

Հայ թատերասէրները, բարեհաճ մասնակցութեամբ տ. Զաբէլի և պ. Ամո-Խարազեանի

Կը ներկայացնեն

I

առաջին անգամ հայերէն լեզուով

ՃԱԿԱՏԱԳՐԻՑ ՀԵՏ ՓԱԽՉԻ

Դրամա 4 գործ. հեղ. Վ. Լանգմէրի, թարգմ. Կ. Մարտիրոսեանցի

Անցքը պատահում է մեր ժամանակում, նահանգական քաղաքներից մէկում

II

ՄԱԴՈՑԻ ԿՏԱԿԸ

Վոդեվիլ 1 գործող.

Սկիզբն է հիշդ 8 ժամին երեկոյեան։
Տեղերի գինը 10-ից մինչև 40 կոպէկ։
Խաղամիջոցներին կը նուագէ երաժշտական խումբը։ Թատրոնին կից դանվում է բուֆէտ։
1—1

ՀՐԱԴԷՐ

Յունիսի 1-ին, կիրակի, ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին, Վանքի մայր եկեղեցում լինելու է երկրորդ և վերջին ծխականների ժողով ընդունելու հոգեոր կոչման մէջ Թիֆլիսի քաղաքացի Սարգիս Իսահակեան Ալիխանեանցին նոյն եկեղեցում սպասաւորութեան համար, ուստի մեծ. պ.պ. ծխականները հրաւիրվում են յիշեալ եկեղեցին՝ ժողովին մասնակցելու համար։

Նախագահ ժողովի Ղ. ա. ք. Խարազեանց
2—2

ԱՏԱՄԻ ՈՒ ԲԵՐԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿ

ԱԼ. ՄԱԹՈՒՐԵԱՆ

ՇՈՒՇՈՒՄ

սկսում է հիւանդների ընդունելութիւնը մայիսի 10-ից։ 10—12

Զգուշացէք կեղծուածներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՈՆ

Գ. Ֆ. ԻՒՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպէները, սեւութիւնը, դեղին բծերը, պուզիկները եւ պատուկները եւ ներգործում է ամենարդ քրտնելու դէմ։ Ներհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապոն, բարձր արժանաւորութեան։

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թ-ի համար։

Կտորի գինը 50 կ., 1/2 կտորի 30 կ.։

Ծախվում է բոլոր ամենալաւ գեղագործական մագազիններում եւ դեղատներում։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում, Աղմուրովի մօտ, գեղագործական ապրանքների առեւտրի կովկասեան ընկերութեան մէջ, Մուրինովի եւ Գրիմպակի, պ.պ. Գոլոմիների եւ Արիստակովի մօտ։ (1, 15) 10—24

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

ՕՐ. Ս. ԾԵՐՄԱՋԱՆԵԱՆ

Շարունակում է հիւանդների ընդունելութիւնը։
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
(Հ. կ.) 67—105

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

№ 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1) Սասունցի Դաւիթը դիւց. վէպ. Ցովհ. Թումանեանի։ 2) Օտարազգին, պատմուածք Լէօնիդ Անդրէեվի, թարգ. Ց. Տ. 3) Գողգոթա, բանաստ. Դիւանտոի, թարգ. Տ. 4) Արտասահմանեան Գրական Նորութիւններ։ 1. L'Abbé Paul Allain Գիւնէտոի, Տիգրան։ 2. Der arme Heinrich Հայուպտմանի, Ե. Թ. 5) Ոճի Պատկերաւորութիւնը Բանաստեղծութեան Մէջ, Գ. Ալթունեանի։ 6) Եւ Վաղուց Ի Վեր. բանաստ. Ա. Իսահակեանի։ 7) Ղազարոս Աղայեան, նրա գրական գործ. 40 ամ. առիթով, Մար. Ցար. 8) Երազների Աշխարհում, Ս. Մ.—Շահնազարեանի։ 9) Գարսից Դպրոցները, Ե. Ֆրանգեանի։ 10) Պետեօֆիից, բանաստեղծութ., թարգ. Ալ. Ծաուբեանի։ 11) Մարրկի Սուրբը, (շար.) վէպ Ա. Ահարոնեանի։ 12) Ոճրագործութեան Մի Նոր Վարդապետութիւն, Մ. Նորդաուի։ 13) Ատրպատականի Հ. Թնամի. Հիմն. Կանոնագրութիւնը, յօդ. Սիրական Տիգրանեանի։ 14) Գերմանիայի Քաղաքական Կեանքից, Quidam-ի։ 15) Մատենախօսութիւն.—1. Զէյթունցի «Զէյթունի անցեալէն և ներկայէն», Ե. Թ.—2. Ա-Դօ «Մակեդոնիա», Ե. Թ.—3) Մ. Պէշիկթաշլեան՝ «Տաղեր» Na.—4. Գ. Ղազարեան՝ «Մեղուաբուծութիւն, N.—5. Է. Ֆերրի՝ «Ոճրագործական դրական դպրոց», Լ. Բ. 16) Տնտեսական Հարցեր, Կովկասի պղնձի արդիւնաբերութիւնը, Ց. Կարապետեանի։ 17) Ներքին Տեսութիւն.—Մեր մամուլի անմիջիայ դրութիւնը.—Առատ ծնունդ և չուտափոյթ մահացումներ.—Մրցումին դիմանալու յատկութիւններ.—Դրական տչխատանքի վարձատրութեան հարցը.—Ընթերցողի և հրատարակչի պահանջները.—Ընկերակցութեան նշանակութիւնը հրատարակչական գործում.—Դրամական և հատարակական չահ.—Վրացին ըմբռնել է հատարակական չահը.— Վրաց ազնուականների ժողովները.—Դասակարգային չահ.—Գիւղատնտեսական միջնակարգ դպրոց և պոլիտեխնիկում.—Զավրովի սպանութիւնը—Հայոց կոնսիստորիայի 400,000 ռուբլի պահանջը ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնից։ Հայոց դրամատիկական ընկերութեան ընդհանուր ժողովը։—Պաշտօնական հաղորդագրութիւն.։—Զլատուստի դէպքը. —Նահանգապետ Բոգդանովիչի սպանութիւնը.—Դատատուի հեռացումը պաշտօնից Ֆինլանդիայում.—Ներքին գործ. մինիստրի շրջաբերականը Քիշինեւի ջարդի մասին.—Անկարգութիւնները Թիֆլիսում և Բագուում։ Մայրենի լեզուով կրօնի դասաւանդութիւն Լէնատանի միջնակարգ դպրոցներում—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ։—Պետերբուրգի 200-ամեակը։—Արևմտեան 9 նահանգների զեմստվոյին կառավարութիւնը. Լ. Ս։ 18) Ժամանակակից Մակեդոնիան, «Ռ. Վ.» 19) Արտաքին Տեսութիւն, Սսի նոր կաթողիկոսի առաջիկայ գործունէութեան մասին։—Կիլիկիայի ազգային վարժարանները.—Մաղկից կոտորածներ Զէյթունում.—Մակեդոնական հոգևորականները և ուսուցիչները.—Եւրոպական դիպլոմատիայի թիւրքասիրութիւնը.—Ամերիկայի ստացած մի արտօնութիւնը.—Բոլգարական նոր մինիստրութիւն և անմիջական բանակցութիւններ Թիւրքիայի հետ.—Հակաաւտրիական ցոյցերը Իտալիայում.—Հակամաղառական ցոյցեր Խորվատիայում Լ. Ս. 20) Պարբերական Հրատարակութիւններ։ 21) Նամակ Խմբագրութեան. 22) Պատասխաններ. 23) Վրիպակներ։ 24) Ցայտարարութիւններ։ 45) Ցաւելուած, Ա. Ը՝ոլլէսի Հրաշալի դար, թարգմ. Ստ. Լիսիցեանի։

УДЕШЕВЛЕННЫЯ ЦѢНЫ

2-го, 3-го, 4-го, 5-го, 6-го и 7-го іюня

ВЪ МАГАЗИНѢ

П. С. ДОРОЖНОВА

Солодакская улица, домъ Гургенова, телефонъ № 583,

ВЪ ПРОДОЛЖЕНІИ ШЕСТИ ДНЕЙ

Съ 2-го по 7-е Іюня

Чтобы не оставалось остатка сезонныхъ товаровъ

Всѣ Весенные и Лѣтные Сезонные Товары.

БУДУТЪ ПРОДОВАТЬСЯ

ПО ЗНАЧИТЕЛЬНО УМЕНШЕННЫМЪ ЦѢНАМЪ

1—2

УДЕШЕВЛЕННЫЯ ЦѢНЫ

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն

«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES».

9/22-ին յունիսի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, «Bagdad» շոգենաւը, հանդիպելով՝ Տրապիզոն, Սամսօն, Կ. Պոլիս, Դարդանել, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդոն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, նոյնպէս և մինչև Շանղհայ (Զինաստանում), Վլադիվոստոկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել՝ Ընկերութեան Թիֆլիսի գործակալ՝ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալերէյում, № 127 գրասենեակը, հեռախօս № 608։ Գրասենեակը բաց է՝ ժամը 9—1-ը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՒ

(INJECTION AU MATICO)

Գրիպ և ընկ դեղագործների թոյլ է տրված Ռուսաստանում։ Այս հեղուկի մէջ չահագործված են պերուանեան Մատիկօ բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէյը (սերմնաթափութիւն) և մի քանի տարվայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Ցարդ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմնաթափութիւնները։

Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(2, 17) 12—24

Дозволено Цензурою. Тифлисъ, 31 Мая 1903 г.

Электропечатня Груз. Изд. Т—ва, В.Ванкская ул.